

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշակերտների ընդունելության ժամկետների փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՆ – ի 24 նոյեմբերի 2010թ. 1640 –Ն հրամանով՝ ուսումնական հաստատությունում սովորողների ընդունելությունը իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի և հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

Ուսումնական հաստատությունում ընդունելությունը իրականացվում է ողջ ուսումնական տարվա ընթացքում, իսկ առաջին դասարանցիների ընդունելությունը՝ հունիսի 1-ից հուլիսի 13-ը ներառյալ և օգոստոսի 20-ից 31-ը ներառյալ:

Սովորողին դպրոց ընդունելու համար ծնողը ներկայացնում է՝

- 1) դիմում՝ ուղղված տնօրենին,
- 2) բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանք՝ առաջին դասարան ընդունվելու դեպքում,
- 3) ծննդյան վկայականի կամ անձնագրի բնօրինակը և պատճենը: Տնօրենի՝ «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ պատճենը պահպանվում է սովորողի անձնական գործում,
- 4) 2 լուսանկար՝ 3X4 չափսի,
- 5) սովորողի՝ «Անձնական գործ» գրքույկը (բացառությամբ առաջին դասարան և ուսումնական տարվա սկզբում ավագ դպրոցի 10-րդ դասարան ընդունվելիս),
- 6) տեղեկանք՝ ընթացիկ գնահատականների և բացակայությունների քանակի մասին, նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ նաև տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների մասին,
- 7) սովորողի տեղափոխման թերթիկը՝ դպրոցից դպրոց տեղափոխվելիս (բացառությամբ ուսումնական տարվա սկզբում հիմնական դպրոցից ավագ դպրոցի 10-րդ դասարան ընդունվելիս): Նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք սվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների մասին ,
- 8) հիմնական կրթության վկայականի բնօրինակը՝ 10-12-րդ դասարաններ ընդունվելիս:

Դպրոցի տնօրեն՝



/Օ. Աղամյան/